

ՊԱՏՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ՎԻՐԱԲՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՆՈՒՅԻՆ ԵՐԿԵՐԻ ՀՈՐԻՆՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՒ ԼԵԶՈՒՆ

ԺԷ. դարի հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչ Զաքարիա Սարկավազ Քանաքեռցին ստեղծել է արժեքավոր երկու աշխատություն՝ Հովհաննավանքի «Կոնդակ»-ը եւ «Պատմագրութիւն»-ը, որոնց հորինման հանգամանքները եւ լեզվաոճական առանձնահատկությունները լուսաբանման կարիք ունեն:

Հեղինակի խոսքերով՝ Հովհաննավանքի «Կոնդակ»-ի շարադրմամբ նպատակ է հետապնդել գրելու «հաստատուն կոնդակ վանացս», որը կներառի «ամենայն արձանք որմոցն»¹: Թեեւ Զաքարիա Քանաքեռցին այդ մասին չի նշում, սակայն այս աշխատությամբ հետապնդել է նաեւ այլ նպատակներ, որոնց կանոնադաշտն ստորեւ:

«Կոնդակ սուրբ Ուխտին Յովհաննու վանից»-ն իր ձեռով ու բովանդակությամբ պատկանում է «Վանից պատմութիւնք» ընդհանուր խորագրի տակ համախմբված եւ մասամբ հորինված ու առասպելական համարվող այն պատմությունների շարքին, որոնց նպատակն է եղել սրբագործել վանական ու եկեղեցական նշանավոր հաստատությունների գոյությունը: Այդպիսի հոգեւոր հաստատությունների կառուցումը վերագրվել է անցյալի քաղաքական ու եկեղեցական հեղինակավոր գործիչների՝ հրաշապատում գրույցների միջոցով այն սրբագործված համարելով որեւէ սրբի մասունքներով²:

Հովհաննավանքի «Կոնդակ»-ում պահպանված ավանդության համաձայն՝ քրիստոնեությունը Հայաստանում որպէս պետական կրոն հռչակվելուց հետո «Սուրբ Լուսաւորիչն եւ բարեպաշտն Տրդատ շինեցին գտուրբ Կա-

¹ Զաքարիա Սարկավազ, Պատմագրութիւն, հ. III, Վաղարշապատ, 1870, էջ 60 (այսուհետեւ՝ Զաքարիա Սարկավազ, հ. I-III):

² Լ. Խաչիկեան, Հայ միջնադարյան «Վանից պատմութեանց» գնահատման հարցի շուրջ, Աշխատություններ, հ. Ա., Երևան, 1995, էջ 109:

րապետն, եւ եղին անդ ի նշխարաց նորա (Հովհաննէս Մկրտչի - Ա. Վ.)»³: Զաքարիա Քանաքեռցին գրում է, որ Հովհաննաւանքի կառուցման հանգամանքների եւ ժամանակի վերաբերյալ գրավոր վկայության չի հանդիպել, այլ դրանց մասին բանավոր լսել է Առաքել Դավրիժեցուց ⁴: Պատմիչը չէր էլ կարող հանդիպել Դ. դարում Հովհաննաւանքի կառուցման վերաբերյալ գրավոր վկայությունների, քանի որ հայ պատմագրության ոչ մի հուշարձանում այդ մասին հիշատակություն չկա: Հովհաննաւանքի՝ Դ. դարի կառույց լինելու վերաբերյալ կարող են ոչ լիարժեքորեն փաստել միայն այդ վանական հաստատության ամենահին բազիլիկ Ս. Կարապետ վանքի հնագիտական ուսումնասիրությունները: Սակայն դրանք ոչ թե հաստատում, այլ լոկ ենթադրում են վանքի՝ այդ դարում կառուցված լինելը⁵:

Իսկ որն էր Հովհաննաւանքի կառուցումը Գրիգոր Լուսավորչին վերագրելու՝ Զաքարիա Քանաքեռցու նպատակը: Այս ճանապարհով պատմիչը փորձել է ոչ միայն բարձրացնել Հովհաննաւանքի հեղինակությունը, այլեւ նպատակ է հետապնդել օրինականացնելու հայրենի Հովհաննաւանքի եկեղեցական վիճակի հավակնությունները: Պատմիչը, ձեռքի տակ չունենալով որեւէ գրավոր աղբյուր, որը կհաստատեր ընդարձակ հողատարածքների հանդեպ Հովհաննաւանքի տնտեսական իրավունքների ամրագրումը Գրիգոր Լուսավորչի կողմից, դիմում է բանավոր աղբյուրի օգնությանը: Նա նշում է, որ ըստ Առաքել Դավրիժեցու պատմածի՝ «յետ շինելոյ սուրբ Կարապետին, գրեաց կոնդակ սուրբ Լուսավորչին եւ հաստատեաց կանոնաւ, զի յԵրասխաձորոյ մինչեւ ցՀուրաստան գետ՝ լինել թէմ բաժնի վանացս»⁶:

Հովհաննաւանքի վիճակն ընդարձակ սահմաններով տեսնելու՝ Զաքարիա Քանաքեռցու ցանկությամբ պետք է պայմանավորել նաեւ Վաչուտյան իշխանական ընտանիքի հիմնադիր Վաչե Ա-ի կալվածքների վերաբերյալ «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից»-ի հիշատակությունը: Պատմիչի համաձայն՝ Զաքարե Բ. ամիրսպասալարը հավատարիմ ծառայության դիմաց Վաչե Ա-ին է տալիս «իշխանութիւն ամենայն Արագածոտնան, Շիրակայ, Նգայ, Անբերդո՝ եւ ամենայն եզերաց նորա՝ մինչեւ ցԵրասխաձոր»⁷: Իրականության մեջ, սակայն, Վաչուտյանները տիրել են ոչ թե ամբողջ Արագածոտնին, այլ Նիգ գավառին՝ առանց դրա արեւելյան հատվածի եւ Արագա-

3 Զաքարիա Մարկապ, հ. III, էջ 4, Հ. Շահխաթունեանց, Ստորագրություն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ զառաջն Արարատայ, հ. Բ., ի Ս. Կաթողիկէ, Էջմիածին, 1842, էջ 96:

4 Զաքարիա Մարկապ, հ. III, էջ 4:

5 Կ. Ղաֆադարյան, Հովհաննաւանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1948, էջ 11: Թ. Թորամանյանի եւ Գ. Հովսեփյանի ուսումնասիրությունները եւս վկայում են բազիլիկ եկեղեցու հնության մասին (Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երեւան, 1942, էջ 131, Գ. Յովսեփյան, Նիւթեր եւ ուսումնասիրություններ հայ արուեստի եւ մշակույթի պատմության, պրակ Գ., Նիւ-Եորք, 1944, էջ 20):

6 Զաքարիա Մարկապ, հ. III, էջ 7:

7 Անդ, էջ 12:

ծոտն զավառի հյուսիս-արեւելյան մասին⁸: Չի հաստատվում նաեւ Շիրակի հանդեպ Վաչուտյանների սեփականատիրական իրավունքների մասին պատմիչի վկայությունը: Կա միայն երկու վիճակագիր արձանագրություն, որոնք, սակայն, Շիրակը Վաչուտյանների իշխանական կալվածքը համարելու համար բավարար հիմքեր չեն տալիս: Համաձայն առաջինի՝ Վաչե Ա. իշխանն ու իր կին Մամախաթունը 1229 թ. Հոռոմոսի եկեղեցում գրատուն են կառուցել⁹, իսկ երկրորդ արձանագրությունը խոսում է միեւնոյն 1229 թ. Մամախաթունի կողմից Անիում իր ունեցած ձիթհանը Սանահնի Ս. Աստվածածին եկեղեցուն նվիրաբերելու մասին¹⁰:

Պատմիչը Հովհաննավանքի հեղինակության բարձրացման եւ տնտեսական երբեմնի լայն իրավունքների ժառանգականության իրավունքի արդարացիությունն ընդգծելու նպատակով վանքի հիմնադիր եւ հովանավոր Վաչուտյան իշխանական տանը տոհմական բարձր ծագում է վերագրում: Հովհաննավանքի «Կոնդակ»-ում Զաքարիա Քանաքեռցին, ի թիվս այլ աղբյուրների, մեջբերում է Վաչե Ա.-ի թոռան թոռ Թեոդորոս Զրքինի 1350 թ. արձանագրությունը, որի՝ Քուրդ Վաչուտյանին հիշատակող հատվածում գրված է. «հայրն իմ, այր Ամատունի, տերն Խոռն Կայծակովէն» արտահայտությունը¹¹: Սրա վրա հիմնվելով՝ հայագիտության մեջ լայն քաղաքացիություն է ստացել Վաչուտյանների ամատունիական ծագման վերաբերյալ տեսակետը¹²: Այս արձանագրության վրա հիմնվելով՝ Ղ. Ալիշանը նույնիսկ Հովհաննավանքն անվանում է Ամատունյաց Ս. Կարապետ¹³: Կ. Ղաֆադարյանը, հետազայում նաեւ Հ. Մարգարյանն ու Տ. Պետրոսյանցն իրավացիորեն առաջարկում են «Այր Ամատունի, տերն» բառերի փոխարեն կարդալ «Այրարատ(ե)ան տերն»¹⁴ (ԺԴ. դարի առաջին կեսին Վաչուտյաններն իշխանություն ունեին ամբողջ Այրարատի նկատմամբ)¹⁵: Թեեւ այս վրիպումը Կ. Ղաֆադարյանը եւ Տ. Պետրոսյանցը համարում են Զաքարիա Քանաքեռցու կողմից արձանագրությու-

8 Տե՛ս Հ. Մարգարեան, Վաչուտյանների իշխանական տան պատմությունից. «Շողակաթ» եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդես, Ստանպոլ, 1995, էջ 39:

9 Տե՛ս «Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոց արձանագրութեանց հայոց»: Կազմեաց՝ Կ. Կոստանեանց, Ս.-Պետերբուրգ, 1913, էջ 72 (այսուհետեւ՝ Վիմական տարեգիր):

10 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1957, էջ 134:

11 Զաքարիա Մարկապա, հ. III, էջ 24, հմմտ. Հ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 107-108, Վիմական տարեգիր, էջ 171:

12 M. Brosset, Rapports sur un voyage arche'ologique dans la Ge'orgie et dans l'Arménie, ex'écut e'en 1847-1848, 1^{re} livrasion, St.-Pe'tersbourg, 1849, էջ 100, Ղ. Ալիշան, Այրարատ (Բնաշխարհ Հայաստանեայց), Վենետիկ, 1890, էջ 254, Հ. Ոսկեան, Ուսումնասիրություններ հայ նախարարություններու մասին, Ա. Խորխոռունիք, Դիմաքսեանք, Ալեկազիք, Անձեւացիք եւ Ամատունիք, Վիեննա, 1955, էջ 117-118, C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown University Press, 1963, էջ 197:

13 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 165:

14 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 45, Հ. Մարգարեան, Վաչուտյանների իշխանական տան պատմությունից, էջ 31, Տ. Պետրոսյանց, Վաչուտյաններ (քաղաքական, տնտեսական, մշակութային պատմություն), Երեւան, 2001, էջ 6:

15 Հ. Մարգարեան, նշվ. աշխ., էջ 37:

նը սխալ ընթերցելու արդյունք, սակայն պատմիչը միտումնավոր է Վաչուտյաններին Ամատունիներ անվանում՝ հետապնդելով որոշակի նպատակներ:

Հովհաննավանքի երբեմնի տեր Վաչուտյաններին Ամատունիներից սերված համարելով՝ Զաքարիա Քանաքեռցին նպատակ է հետապնդել ոչ միայն բարձրացնելու հայրենի վանքի հեղինակությունն ու հիմնավորելու վերջինիս եկեղեցական վիճակի հավակնությունները, այլև միեւնոյն՝ քրդական ծագմամբ օժտելու Զաքարյաններին¹⁶ եւ նրանց ենթակա Վաչուտյաններին¹⁷: Այս համապատկերում պետք է դիտարկել նաեւ Ամատունի եւ Վաչուտյան իշխանական ընտանիքներին քրդական արմատներով շաղկապելու՝ պատմիչի ձգտումը:

Ամատունիների քրդական ծագման վարկածը Զաքարիա Քանաքեռցին առաջ է քաշում՝ առաջնորդվելով Երվանդ Վերջինի մասին պատմող հատվածում Մովսես Խորենացու գործածած «Մար արմատ»¹⁸ եզրույթի եւ «Ամատունի» տոհմանվան միջեւ աղերսով¹⁹: Պատմիչը Վաչուտյանների մարական (քրդական)²⁰ ծագումը մատնանշում է այս նշանավոր իշխանական տան նախահայր Սարգիսին «յագգէ Աժդահակայ» համարելով: Այս եզրույթի տակ Զաքարիա Քանաքեռցին նկատի ունի «մար» էթնոնիմը, որը պետք է պայմանավորել Մովսես Խորենացու ազդեցությամբ: Պատմահայրը, անդրադառնալով Տիգրան Երվանդյանի գործունեությանը, վերջինիս դաշնակից Աժդահակին «Մարացի» է անվանում²¹: Այնուհետեւ Մովսես Խորենացին, ներկայացնելով Վաղարշակ թագավորի բարենորոգումները, նշում է, որ վերջինս, «Յետ կարգելոյ գտուն թագաւորին՝ երկրորդ թագաւորութեանն լինել ի գաւակէ Աժդահակայ, Մարաց եղելոյ թագաւորի»²²: Որպէս Վաչուտյանների քրդական ծագման ապացույց՝ Զաքարիա Քանաքեռցին դիտարկում է նաեւ այս իշխանական ընտանիքի մեջ Քուրդ անձնանվան հաճախադեպությունը²³:

16 Զաքարյանների մարական (քրդական) ծագման տեսության վերաբերյալ մանրամասն տե՛ս Հ. Մարգարյան, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, ՊԲՀ, 1992, թ. 2-3, էջ 146-149:

17 Տե՛ս Հ. Մարգարեան, Վաչուտեանների իշխանական տան պատմությունից, էջ 34:

18 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Հարությունյանի, Երևան, 1991, էջ 173 (այսուհետեւ՝ Մովսէս Խորենացի):

19 Տե՛ս Հ. Մարգարեան, Վաչուտեանների իշխանական տան պատմությունից, էջ 33: Ըստ Դ. Ալիշանի՝ Մովսես Խորենացու հիշատակած «Արմատ» բառից էլ ծագել է Ամատունիների անունը (Դ. Ալիշան, Այրարատ, էջ 254):

20 Մինչեւ ԺԷ. - ԺԸ. դարերը Մովսես Խորենացին եւ նրան հաջորդած հայ պատմիչները «քուրդ» էթնոնիմի փոխարեն օգտագործել են «մար» եզրույթը (Հ. Մարգարյան, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, էջ 146-147):

21 Մովսէս Խորենացի, էջ 73:

22 Անդ, էջ 112:

23 Տե՛ս Հ. Մարգարեան, Վաչուտեանների իշխանական տան պատմությունից, էջ 34: Ա. Հովհաննիսյանն եւս հավանական է համարում Վաչուտյանների քրդական ծագումը՝ որպէս փաստարկ բերելով Վաչուտյանների մոտ «Քուրդ» անձնանվան տարածված լինելը (Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ., Երևան, 1959, էջ 153):

Պատմիչի վկայության հիման վրա Վաչուտյաններին քրդական ծագմամբ է օժտում նաեւ Հ. Շահբազյանը²⁴: Իրականության մեջ, սակայն, Վաչուտյանները հայկական ծագում ունեն: Այս փաստը հաստատվում է Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, համաձայն որի՝ Քուրդ Ա. Վաչուտյանը «հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ» էր²⁵:

Զաքարիա Քանաքեռցին Հովհաննավանքի «Կոնդակ»-ն սկսել է գրի առնել առավել հասուն տարիքում, սակայն, ըստ պատմիչի՝ գաղափարը հղացել է ավելի վաղ: Նպատակի իրականացումն ուշացել է, քանի որ պատմիչը գտնվել է «ընդ ձեռամբ տերանց» եւ «ի մէջ մարմնաւոր զբաղմանց»²⁶:

Երկի շարադրման գործում Զաքարիա Քանաքեռցուն օգնել է Հովհաննավանքի առաջնորդ Սարգիս Կարբեցին, որն այդ պաշտոնը զբաղեցնում էր 1679 թվականից՝ հաջորդելով Հովհաննես Կարբեցուն²⁷: «Պատմագրութեան» բնագրի հրատարակության մեջ, որի երրորդ հատոր համարվող Հովհաննավանքի «Կոնդակ»-ը կազմվել է Մատենադարանի թիվ 8636 ձեռագրի հիման վրա, պակասում է Սարգիս Կարբեցու գործունեությունը նկարագրող հատվածը²⁸: Այս հանգամանքը հիմք ընդունելով՝ Կ. Ղաֆադարյանը եզրակացրել է, որ Զաքարիա Քանաքեռցու մահից հետո Սարգիս Կարբեցուն վերաբերող հատվածը պարունակող թերթերը ձեռագրից պոկել են վերջինիս հակառակորդները²⁹: Սակայն, բարեբախտաբար, Մատենադարանի թիվ 1522 ձեռագրում գետեղված Հովհաննավանքի «Կոնդակ»-ի բնագրում Սարգիս Կարբեցուն վերաբերող հատվածը պահպանված է անխաթար³⁰:

Ի տարբերություն «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից»-ի, «Պատմագրության» շարադրման հանգամանքների վերաբերյալ պատմիչը լռում է՝ խոսելով միայն այն ծանր վիճակի մասին, որ Հայաստանում ստեղծվել էր ԺԷ. դարավերջին: Այս մասին Զաքարիա Քանաքեռցին գրում է. «Ի սպառել ժամանակիս եւ ի վերջին դարուս՝ ի նուստանալ ազգիս Հայոց, եւ ի զօրանալ ազգին Պարսից, յորում նեղիմք եւ տառապիմք ազգի ազգի կեղեքմամբ եւ պէսպէս աւարմամբ»³¹: Քաջ գիտակցելով, որ ստեղծված պայմաններում հայ ժողովուրդն անհրաժեշտ ուժեր չունի երկրի ազատագրության համար՝ պատմիչն այդ սրբազան առաքելությունը վերապահել է գալիք սերնդին՝ իր երկի միջոցով նպատակ հետապնդելով ստեղծելու այդ գործի իրականացման համար անհրաժեշտ գաղափարական հիմքեր: Զաքարիա Քանաքեռցուն քա-

24 Յ. Շահբազյան, Քիւրդո - հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 51- 52:

25 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 365:

26 Զաքարիա Մարկաագ, հ. III, էջ 7:

27 Տե՛ս անդ, էջ 33:

28 Տե՛ս անդ, էջ 38, ՄՄ. ձեռ. 8636, էջ 79 ր - 80 ա:

29 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 55:

30 ՄՄ. ձեռ. 1522, էջ 493 ր:

31 Զաքարիա Մարկաագ, հ. II, էջ 142-143:

շահալայտ էին Հայաստանի ազատագրության խնդիրը մեծ պետություններին վստահելու ծանր հետեւանքները: Նա իր աչքի առջեւ ուներ կաթոլիկ միսիոներների անհաջող փորձը, որոնց՝ Հայոց եկեղեցին կաթոլիկացնելու նպատակադիր գործունեությունը բարեբախտաբար անարդյունք ավարտվեց: Իսկ Զաքարիա Քանաքեռցու գիտակցության մեջ սեփական երկրի պատմությունը գրելու գաղափարական սաղմերը դրել էին Հովհաննավանքի հայրենասեր վանահայրերը՝ Առաքել Դավրիժեցին եւ Զաքարիա Վաղարշապատցին:

Եթե Հովհաննավանքի «Կոնդակ»-ի դեպքում Զաքարիա Քանաքեռցին երկի պատվիրատու է հիշատակում Հովհաննավանքի վանահայր Սարգիս Կարբեցուն, ապա «Պատմագրութեան» շարադրանքը պատմիչն ինքնուրույն է նախաձեռնել: Դա նրան հնարավորություն է տվել գերծ մնալու պատվիրատուի պարտադրած ժանրային կողմնորոշումներից: Արդյունքում՝ «Պատմագրութեան» մեջ են ներթափանցել ազգային-հասարակական, քաղաքական եւ ընկերային բազմաշերտ խնդիրներ եւ տարաբնույթ արժարժույթներ: Հարեւան երկրների պատմության վերաբերյալ պարունակած տեղեկությունների շնորհիվ այս երկը դարձավ արժեքավոր սկզբնաղբյուր ոչ միայն ԺԷ. դարի հայոց պատմության, այլեւ Հայաստանին հարակից երկրների (Պարսկաստան, Վրաստան) պատմության ուսումնասիրության համար: Մյուս կողմից, սակայն, պատմիչը չէր կարող ձերբազատվել եկեղեցականին բնորոշ մտածելակերպից: Հենց սրանով է պայմանավորված եկեղեցական բնույթի պատմությունների ներառումը երկում, որը բարձրացնում է «Պատմագրութեան» պատմաեկեղեցական արժեքը:

Զաքարիա Քանաքեռցին նախ սկսել է շարադրել Հովհաննավանքի «Կոնդակ»-ը, ապա «Պատմագրության» առաջին երկու հատորները³²:

«Կոնդակ»-ի շարադրանքի վերաբերյալ պատմիչը գրում է. «Սկսայ առնել ի ժամանակի ծերութեան իմոյ՝ Կ. (60) ամի կենաց իմոց՝ ի թուին ՌՃԼԶ. (1687)»³³: Սրանից հետեւում է, որ Զաքարիա Քանաքեռցին 1687 թ. է սկսել «Կոնդակ»-ի շարադրանքը: Սակայն դրա ավարտի թվականի վերաբերյալ պատմիչը լռում է: Այս խնդրի վրա լույս է սփռում Մատենադարանի թիվ 1522 ձեռագիրը, որի նորոգումը «եղեւ ... ի թուին Ռ.-երորդի, Ճ.-երորդի, Լ.-երորդի եւ Զ.-եակ թուոյ (1687) ... ձեռամբ ... Զաքարիա ... Քանաքեռցոյ, անուամբ եւեթ սարկաւագի»³⁴: Վերջինիս կազմում էլ պատմիչը գետեղել է «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից»-ը, որն ընդգրկում է ձեռագրի 483 ա - 496 ք էջերը: Հետեւաբար Հովհաննավանքի «Կոնդակ»-ի շարադրանքի ավարտ-

32 Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ., Երեւան, 1970, էջ 526-527:

33 Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 2:

34 ՄՄ. ձեռ. № 1522, էջ 568 ա, Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա., Երեւան, 1979, էջ 317, Յու. Վարդանյան, Հովհաննավանքի ճառքների ձեռագրի մասին, ՊԲՀ, 1986, թ. 4, էջ 179:

ման թվականն պետք է համարել 1687-ը: Այսպիսով՝ ստացվում է, որ Զաքարիա Քանաքեռցին «Կոնդակ»-ի շարադրանքն ավարտել է ընդամենը մեկ տարվա ընթացքում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինիս շարադրման հիմք հանդիսացող ձեռագրերը եւ վիմագիր արձանագրությունները գտնվել են պատմիչի ձեռքի տակ, ինչը նրան թույլ է տվել կարճ ժամանակահատվածում գրի առնել այն:

«Պատմագրութեան» առաջին երկու հատորների շարադրման սկզբնական տարեթվի մասին հեղինակը լռում է: Դրա փոխարեն, որպես ավարտի տարեթիվ նա նշում է 1699-ը³⁵: Հետեւաբար, պետք է ենթադրել, որ երկի շարադրանքը Զաքարիա Քանաքեռցին սկսել է Հովհաննավանքի «Կոնդակ»-ն ավարտելուց հետո՝ 1687 թ:

Զաքարիա Քանաքեռցու աշխատություններն աչքի է ընկնում կենդանի լեզվով եւ պարզ ոճով: Դրանց բնորոշ են ԺԵ. - ԺԸ. դարերի հայ մատենագրության առանձնահատկությունները, այն է՝ գրաբարի եւ աշխարհաբարի խառն գործածումը: Ն. Դիլբարյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Զաքարիա Սարկավագի «Պատմագրութեան» լեզուն յուրօրինակ մի շերտ է, ուր ընտիր գրաբարը գուգակցվում է միջինհայերենյան եւ աշխարհաբարյան հնչյունական, քերականական երեսույթների ու բառապաշարի հետ»³⁶: Հատկապես «Պատմագրութիւն»-ն աչքի է ընկնում նաեւ պարսկերեն եւ թուրքերեն բառամթերքով: Սակայն հենվելով միայն այդ հանգամանքի վրա՝ դժվար է պնդել, որ պատմիչը տիրապետել է պարսկերենին ու թուրքերենին: Դարերի ընթացքում Հայաստանի տարածքը եղել է պարսկա-թուրքական պատերազմների հիմնական թատերաբեմ, որի հետեւանքով Պարսկաստանի եւ Օսմանյան կայսրության փոխանցիկ տիրապետության պայմաններում հայերենի մեջ սողոսկել էին պարսկերեն եւ թուրքերեն փոխառյալ բառեր, որոնց օգտագործողներից էր նաեւ Զաքարիա Քանաքեռցին: Պատմիչը պարբերաբար լինում էր նաեւ Պարսկաստանի եւ Թուրքիայի խոշոր քաղաքներում, որտեղ առանց պարսկերենի եւ թուրքերենի իմացության նրա համար դժվար կլիներ:

Զաքարիա Քանաքեռցու կողմից դասական գրաբարից մասնակի օտարվելը չի վրիպել հայագետների ուշադրությունից: Արեւ արքեպիսկոպոսի բնութագրմամբ պատմիչի «ոճը անարուեստ է, թեւ գրաբառ, բայց աշխարհաբառի խառնուրդով կը կազմէ»³⁷: Ե. Դուրյանը քննվող երկը համարում է «կարեւոր...եւ հետաքննական», սակայն քննադատում է «Պատմագրութեան» լեզուն, որն ըստ հեղինակի՝ հակասում է հայերենի ամենապարզ կանոններ-

35 Տե՛ս Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 142-143:

36 Ն. Դիլբարյան, Աշխարհաբարի տարրերը Զաքարիա Սարկավագի «Պատմագրութեան» մեջ, ԲԵՀ, 2003, թ. 3, էջ 123-124:

37 Արեւ արքեպիսկոպոս Մխիթարեանց, Կենսագրութիւն Զաքարիայ պատմագրի սարկավագի Յովհաննավանց, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 383:

րին³⁸: Գ. Օզանյանը, անդրադառնալով պատմիչի լեզվաոճին, նշում է, որ «Ամբողջ պատմության մեջ վիպական արուեստ կայ կարծես. այնչափ ախորժով կը լափուի»³⁹: Լեոն եւս Զաքարիա Քանաքեռցուն համարում է «վերին աստիճանի պարզ ոճ ունեցող մի տաղանդավոր գրիչ»⁴⁰, որի մոտ «շատ դէմքեր ու դէպքեր բաւական կենդանի կերպով են նկարված»⁴¹: Ա. Առաքելյանի բնորոշմամբ՝ Զաքարիա Քանաքեռցին գրում է «կարճ ու հասարակ, մատչելի լեզվով, աշխույժ ոճով»⁴²: Իսկ Գ. Զարպիհանալյանը նշում է, որ Զաքարիա Քանաքեռցին ունի գրեթե նույն ոճն ու լեզուն, ինչ Առաքել Դավրիժեցին⁴³:

Զաքարիա Քանաքեռցու շարադրանքի ոճը միապաղաղ չէ: Ըստ հաղորդվող նյութի եւ հեղինակի ցուցաբերած վերաբերմունքի՝ այն փոխվում է: Վիպական հատվածները, ավանդապատումներն ու գրույցները շարադրելիս պատմիչը կիրառում է աշխույժ եւ թեթեւ ոճ:

Բնութագրումների մեջ խոսքն առավել պատկերավոր դարձնելու միտումով Զաքարիա Քանաքեռցին հաճախ դիմում է համեմատությունների: Այսպես, օրինակ՝ գլուխներից մեկում շահ Աբբաս I-ի գայրույթի չափը ներկայացնելու համար պատմիչը գրում է. «Գոչեր որպէս ձագակորուստ առիծ»⁴⁴. նույն շահին իր վավաշոտության համար նմանեցնում է շանը եւ այլն⁴⁵:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ Զաքարիա Քանաքեռցին, ապրելով փորձություններով լի մի ժամանակաշրջանում, երբ երկու մասի բաժանված հայ ժողովուրդը կենաց ու մահու կռիվ էր մղում ազգային ինքնության պահպանման համար, խորապես գիտակցելով իր կոչումը որպէս պատմագրի եւ պարզ հասկանալով նախաձեռնած գործի անհրաժեշտությունը, ձգտել ու ստեղծել է բազմաընդգրկուն աշխատություններ, որոնք իրավամբ կարելի է դասել հայ միջնադարյան պատմագրության կարեւոր մատյանների թվին:

38 Ե. Դուրեան, Պատմություն հայ մատենագրության ի վաղ ժամանակաց մինչեւ մեր օրերն: Ի պետազգային վարժարանաց, Կ. Պոլիս, 1885, էջ 82:

39 Գ. Օզանեան, Պատմություն հայ լեզուի եւ բանահյուսության, Մարգուան, 1913, էջ 226:

40 Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գիրք I, Երևան, 1969, էջ 355:

41 Լեո, Հայկական տպագրություն, հայերը նոր պատմության մեջ, պատմական-գրական տեսություն, առաջին հատոր, XVI-XVII դար, երկրորդ տպագրություն փոփոխած եւ լրացրած, Թիֆլիս, 1904, էջ 380:

42 Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (XIV-XIX դդ. առաջին կեսը), հ. II, Երևան, 1964, էջ 568:

43 Տեն Գ. Զարպիհանալեան, Պատմություն հայերեն դպրության ի պետա ուսման ազգային վարժարանաց, հ. Բ., Նոր մատենագրություն, Վենետիկ, 1878, էջ 179:

44 Զաքարիա Մարկասզ, հ. I, էջ 29:

45 Տեն անդ, էջ 37:

РЕЗЮМЕ

Целью создания “Энциклики” Ованаванка, автором которой является Закария Канакерци, было освящение существования этого монастырского комплекса. Поэтому автор приписал строительство Ованаванка выдающимся политикам и духовенству прошлого, согласно “Энциклике”. Ованаванк считался освященным из-за мощей какого-либо святого. Рассказчик, написав свою “Хронику”, задался целью создать идеологическую основу для освобождения Армении, сохранить и передать это дело последующим поколениям.

Работы Закария Канакерци выделяются живым языком и простым стилем повествования. Некоторые особенности армянской историографии XV-XVIII вв. характерны для этих произведений - сочетание староармянского (грабара) и новоармянского (ашхарабара). Стил повествования неоднобразен. Чтобы сделать язык повествования более живописным, Закария Канакерци часто обращается к сравнениям.

SUMMARY

The aim of the writing of Hovhannavank's "Encyclical" by Zakaria Kanakertsy was to make sacred the existence of this Monastery Complex. So the building of Hovhannavank was due to outstanding politicians and priests of the past according to the Hovhannavank's "Encyclical". Hovhannavank was considered sacred through the relics of a saint. And by writing the "Chronicle", the narrator made his aim to create ideological basis for liberation of Armenia and keep it for the further generations.

The works of Zakaria Kanakertsy are vital with its lively language and simple style. Some properties of Armenian Historiography of XV-XVIII centuries are characteristic of these works - the mixture of the old Armenian (grabar) and the new Armenian (ashkharabar) languages. The writing style of the narrator is not monotonous. To make his language more picturesque Zakaria Kanakertsy often turns to comparisons.